ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՋԿ-ՀՄԱԾՁԲ-25/7-Խ

ք. Երևան «23» դեկտեմբերի 2025թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող տիկին Ռ. Հարությունյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Նազիկ Սահակյանը, ծնված 07.04.1981թ., անձ. AV06472477, տրված 21.02.2023թ. 009-ի կոցղմից, հանրային ծառայությունների համարանիշը 5704810519 (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» Ֆինանսական Կառավարման Մասնագետի խորհրդատվության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14,312,000 (տասնչորս միլիոն երեք հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջրային կոմիտե	Նազիկ Սահակյան
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ ք. Երևան, 0020 Նոր-Արեշ, 28
ՖՆ գործառնական վարչություն	փող., ½ տուն
Հ/Հ 900011040467	AV06472477, տրված 21.02.2023թ. 009-ի
ՀՎՀՀ 02555816	կոցղմից, հանրային ծառայությունների
գլխավոր քարտուղարի	համարանիշը 5704810519
պարտականությունները կատարող	Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
scws@scws.am	Հ/Հ1570038503835000
_____Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հեռ. +37491234237
(ստորագրություն)	էլ. հասցե՝ nazik.sahakyan@gmail.com
Կ. Տ.	
(ստորագրություն)	----------Ն. ՍԱՀԱԿՅԱՆ
Կ. Տ	(ստորագրություն)

Հավելված N 1
«23» դեկտեմբերի 2025թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-25/7-Խ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը*
85311210/38	խորհրդատվության ծառայություններ	*կարդալ ստորև	դրամ	14,312,000	1	Ծառայությունները մատուցվում են Ջրային կոմիտեում՝ Վարդանանց 13ա կամ Վարդանանց փակուղի 8 հասցեներում	Ծառայությունները մատուցվելու են մինչև «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» շրջանակում, ոչ ուշ քան 30.12.2026թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 26-ը: 2026թ. հատկացվեծ ֆինանսական միջոցների շրջանակում հավելվածը կլարացվի և կկնքվի համաձայնագիր:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» Ֆինանսական Կառավարման Մասնագետի խորհրդատվական ծառայություններ

Ծառայության նկարագիրը

«Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» Ծրագրի Ֆինանասկան կառավարման մասնագետի խորհրդատվական ծառայություններ

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային բանկի (ՀԲ), Զարգացման ֆրանսիական գործակալության (ԶՖԳ) և Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման» (ՋՈԾԲ) ծրագիրը: Ծրագրի զարգացման նպատակն է (ԾԶՆ) ապահովել բարելավված հասանելիություն դեպի արդյունավետ, ֆինանսապես կայուն ոռոգման ու գյուղական բնակավայրերում անվտանգ կառավարվող ջրամատակարարաման և ջրահեռացման (ՋևՋ) ծառայությունները Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը հանդիսանում է Բազմափուլային զարգացման մոտեցման (ԲԶՄ) մի մաս, որի նպատակն է բարելավել ոռոգման և գյուղական ՋՋ ծառայությունների մատուցումը Հայաստանում: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ջրային ռեսուրսների անվտանգ կառավարման մակարդակը՝ հետևյալ հիմնական ուղղություններով. ա) ընտրված ոռոգման համակարգերի արդիականացում, բ) ընտրված գյուղական համայնքներում և մարզերում ջրամատակարարման բարելավում, և գ) ջրային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ, ֆինանսական և բնապահպանական կայունության ամրապնդում:

ՋՈԾԲ ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում Ենթաբաղադրիչ 1.1. Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման ամրապնդում

Ենթաբաղադրիչ 1.2. Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավում

Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում

Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում և կարգավորող բարեփոխումներ

Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ

Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում

Ենթաբաղադրիչ 3.1. Կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում

Ենթաբաղադրիչ 3.2. Վերահսկիչ կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգի ներդրում

Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն առաջադրանքի նպատակն է ապահովել ՋՈԾԲ ծրագրի ֆինանսական կառավարման արդյունավետ և կայուն իրականացումը, ներառյալ՝ հաշվապահական ամուր համակարգերի ձևավորումն ու պահպանումը, Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի (ՀԲ) ֆինանսական կառավարման պահանջներին համապատասխանության ապահովումը, ինչպես նաև ճշգրիտ և ժամանակին ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ու ներկայացումը:

Ֆինանսական կառավարման մասնագետը (ՖԿՄ) պատասխանատու է ՋՈԾԲ ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր ֆինանսական գործառնությունների վերահսկման համար՝ ապահովելով ծրագրային միջոցների թափանցիկ և նպատակային օգտագործումը:
Նա նաև աջակցելու է Ծրագրի նպատակների իրագործմանը՝ ապահովելով ուժեղ ֆիդուցիար վերահսկողություն և համապատասխանություն բոլոր ֆինանսական ընթացակարգերին:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական կառավարման մասնագետի պարտականությունները ներառում են հետևյալը (պարտականությունները ներառում են ինչպես Ծրագրի մինչև ուժի մեջ մտնելու ժամանակաշրջանը այնպես էլ Ծրագրի իրականացման հիմնական փուլը).

1. Ստեղծել և պահպանել ծրագրի ֆինանսական կառավարման և հաշվապահական համակարգ՝ համահունչ ՀԲ-ի ֆինանսական կառավարման չափորոշիչներին և ազգային կանոնակարգերին:
2. Մշակել և ներդնել Ֆինանսական կառավարման ձեռնարկ (ՖԿՁ), որը կներառի ծրագրի հաշվապահական և ֆինանսական գործառնությունների գրավոր ընթացակարգերն ու վերահսկման մեխանիզմները:
3. Ապահովել բոլոր ֆինանսական գործարքների պատշաճ գրանցումն ու դասակարգումը, ներառյալ՝ վճարումները, մուտքերը, կանխավճարները և փոխհատուցումները:
4. Իրականացնել ծրագրի ֆինանսական միջոցների մասհանումները և մասհանման հայտերի պատրաստումը՝ համաձայն ՀԲ-ի և Ֆինանսների նախարարության (Գանձապետարան) սահմանված ընթացակարգերի: Ապահովել բանկային և գանձապետական հաշիվների մնացորդների կանոնավոր համադրումը ծրագրի հաշվապահական գրառումների և ՀԲ-ի *Client Connection* համակարգի տվյալների հետ:
5. Նախապատրաստել ծրագրի տարեկան բյուջեն՝ ծրագրի ղեկավարի և գնումների մասնագետի հետ սերտ համագործակցությամբ:
6. Ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ, այդ թվում՝ աուդիտ չանցած միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (IFRs), տարեկան ֆինանսական հաշվետվությունները և այլ պահանջվող փաստաթղթերը՝ Համաշխարհային բանկին, Ֆինանսների նախարարությանը և շահագրգիռ կողմերին:
7. Մշտադիտարկել ծախսերն ու պարտավորությունները՝ համեմատելով դրանք հաստատված բյուջեի հետ և ապահովելով, որ բոլոր գործառնություններն իրականացվեն տրամադրված ֆինանսական ռեսուրսների սահմաններում:
8. Համագործակցել գնումների մասնագետի հետ, ապահովելու գնումների ֆինանսական ասպեկտների պատշաճ կառավարումը՝ ներառյալ ծախսերի գնահատումները, վճարման պայմանները և պայմանագրերի ֆինանսական մոնիթորինգը:

9. Վարել պայմանագրերի, հաշիվ-ապրանքագրերի, վճարման հայտերի և հիմնավորող փաստաթղթերի ամբողջական և արդիական գրանցամատյաններ՝ համաձայն ՀԲ-ի և ազգային աուդիտորական պահանջների:

10. Ապահովել հաշվապահական գրառումների պատշաճ արխիվացումը և հասանելիությունը աուդիտորների, ՀԲ-ի և վերահսկող մարմինների կողմից ստուգման համար:

11. Համակարգել և աջակցել տարեկան արտաքին աուդիտներին, ապահովելով աուդիտորական դիտարկումների և առաջարկությունների ժամանակին արձագանքը և լուծումները:

12. Մասնակցել ՀԲ-ի աջակցման առաքելություններին և պատշաճ կերպով արձագանքել ներկայացված դիտարկումներին ու առաջարկություններին:

13. Կապ պահպանել ՀԲ-ի երևանյան գրասենյակի հետ՝ ֆինանսական կառավարման հարցերով:

14. Տրամադրել ֆինանսական խորհրդատվություն և օժանդակություն ՋՈԾԲ ծրագրի ղեկավարին, ղեկավարի տեղակալին և թիմի այլ անդամներին՝ ըստ անհրաժեշտության:

15. Ապահովել արդյունավետ ներքին վերահսկողություն, պարտականությունների բաշխում և ֆինանսական ռիսկերի մեղմում:

16. Իրականացնել ծրագրի ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից տրված ֆինանսների հետ կապված ցանկացած այլ առաջադրանք:

3. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

- Բարձրագույն կրթություն ֆինանսական, հաշվապահական, տնտեսագիտական կամ հարակից այլ ոլորտում: ACCA կամ CPA մասնագիտական որակավորումը կդիտվի որպես առավելություն:
- Առնվազն 7 տարվա մասնագիտական փորձ ֆինանսական կառավարման ոլորտում, պետական կառույցներում կամ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերում ունեցած փորձը ցանկալի է:
- Գիտելիքներ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) վերաբերյալ: Համաշխարհային բանկի (ՀԲ) ֆինանսական կառավարման ուղեցույցներին և ընթացակարգերին տիրապետելը կդիտվի՝ որպես առավելություն:
- Փորձ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, բյուջեների պլանավորման և ծրագրային ծախսերի մոնիթորինգի ոլորտներում:
- Ֆինանսական կառավարման համակարգերի և ներքին վերահսկողության մեխանիզմների նախագծման և ներդրման կարողություն:
- Ֆինանսական կառավարման ծրագրային ապահովման և MS Office հավելվածների գերազանց տիրապետում:
- Վերլուծական մտածողության, խնդիրների արդյունավետ լուծման և բանավոր հաղորդակցության մակարդակով:
- Հեշտ ինտեգրման, մանրուքների նկատմամբ ուշադրության, գաղտնիության պահպանման հմտություններ:

4. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՈԾԲ ծրագրի Ֆինանսական կառավարման մասնագետի ծառայությունները ձեռք են բերվում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ առաջադրանքի իրականացման համար սահմանված ժամկետի համաձայն:

Ծառայությունները մատուցվում են ամբողջական աշխատանքային գրաֆիկով, Երևանում: Անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն գործուղումներ դեպի ծրագրի տարածք:

- Ֆինանսական կառավարման մասնագետը հաշվետու է ՋՈԾԲ ծրագրի ղեկավարին:

Աշխատանքները կիրականացվեն.	
1. մինչև «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» ուժի մեջ մտնելը	կկնքվի համաձայնագիր

2. «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» իրականացման հիմնական փուլում	կկնքվի պայմանագիր Ծրագրի հիմնական փուլի իրականացման ժամանակահատվածի համար՝ 6 տարով
Ֆինանսավորման աղբյուր	
1. մինչև «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» ուժի մեջ մտնելը	ՀՀ պետական բյուջե
2. «Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագրի (WISE)» իրականացման հիմնական փուլում	«Ջրային և ոռոգման ծառայությունների բարելավման (WISE)» ծրագրի իրականացման համար 2025թ-ի սեպտեմբերի 18-ին ՀՀ ֆինանսների նախարարի կողմից ստորագրված թիվ 9831-ԱՄ Վարկային համաձայնագրի շրջանակներում հատկացվելիք ֆինանսական միջոցներից
Հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից աշխատանքների ընդունման ժամկետը	5 աշխատանքային օր
Վճարման ժամանակացույց	
2025թ.	2026թ.
4-5%	հավասար համամասնությամբ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
scws@scws.am

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Նազիկ Սահակյան
Հասցե՝ ք. Երևան, 0020 Նոր-Արեշ, 28 փող., ½ տուն
AV06472477, տրված 21.02.2023թ. 009-ի կոդոմից, հանրային ծառայությունների համարանիշը 5704810519
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ1570038503835000
Հեռ. +37491234237
Էլ. հասցե՝ nazik.sahakyan@gmail.com

Ն. ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

«23» դեկտեմբերի 2025թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-25/7-Խ ծածկագրով պայմանագրի
Հավելված N 2

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	85311210/38	խորհրդատվության ծառայություններ	572,500	572,500

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամողական կարգով:*
***2026թ. հատկացվեծ ֆինանսական միջոցների շրջանակում հավելվածը կլարացվի և կկնքվի համաձայնագիր:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
scws@scws.am

Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Նազիկ Սահակյան
Հասցե՝ ք. Երևան, 0020 Նոր-Արեշ, 28 փող., ½ տուն
AV06472477, տրված 21.02.2023թ. 009-ի կոդոմից, հանրային ծառայությունների համարանիշը 5704810519
Բանկը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ1570038503835000
Հեռ. +37491234237
Էլ. հասցե՝ nazik.sahakyan@gmail.com

Ն. ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3
« 23 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՋԿ-ՀՄԱԾՁԲ-25/7-Խ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 23 » դեկտեմբերի 2025թ. կնքված
***ՋԿ-ՀՄԱԾՁԲ-25/7-Խ** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն